ՆՈՐ ԳԻՐՔ

«ՀԵՆՑ ԱՅՍՊԵՍ»

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ 10-ՐԴ ԳԻՐՔԸ



Հենց այսպես է վերնագրված մեր գործընկերոջ, «Վրաստան» թերթի առաքման եւ բաժանորդագրության ծառայության ղեկավար, Վրաստանի եւ Հայաստանի գրողների միության անդամ, բանաստեղծուհի Անահիտ Բոստանջյանի թվով 10-րդ բանաստեղծական ժողովածուն, որը այս օրերին լույս տեսավ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի «Ծիծեռնակ» հրատարակչությունում:

Ասենք նաեւ, որ ժողովածուն հրատարակվել է Հայաստանի գրողների միության նախագահ էդվարդ Միլիտոնյանի աջակցությամբ:

Բանաստեղծուհուն ու ընթերցողին դիմելով, երեւանցի հայտնի գրականագետ Լեւոն Մութաֆյանը ժողովածուի նախաբանում մասնավորապես ընդգծում է. «Անահիտ Բոստանջյանի գիրն իր ինքնատիպությամբ յուրովի-ինքնովի փորձում է միավորել սեւակյան ավանդույթը սահյանական ավանդույթին՝ այսպես ստեղծելով այն ինքնօրինակ սիմբիոզը, որն արդեն ավանդույթն է ամուր, պինդ, կայացած, սեփական տեսադրույթներն ու գեղարվեստական ձեւերը հաստատած...»: Իսկ երկրորդ նախաբանի հեղինակը բանաստեղծ Արա Արթյանը, որը Անահիտի համակուրսեցին էր Գյումրիի մանկավարժական ինստիտուտում սովորելիս, ասում է. «Գրքի վերնագիրն իսկ ինքնահաստատման բանաձեւ է, անգիջում եւ ամուր բնավորության արտահայտություն: Հին օրերի ջերմությամբ ողջունում եմ իր նոր, հոբելյանական գրքի ծնունդը, բարեկամուհուս գրքի, որ ապրում ու գրում է ՀԵՆՑ ԱՅՍՊԵՍ:

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ՄԱՆՈՅԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ



Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի եւ Վրաստանի հայ նկարիչների միության կազմակերպմամբ,՝ նոյեմբերի 21-ին կենտրոնում տեղի ունեցավ Վրաստանի հայ վրձնարվեստի պատմության մեջ ուրույն էջեր արձանագրած Գիորգի Մանոյան գեղանկարչի գրաֆիկական աշխատանքների անհատական ցուցահանդեսը, որը 60-ամյա նկարչի՝ վերջին տարիների ստեղծագործական ոգորումների պտուղն է եւ ընթացավ՝ «Հեռացող Թիֆլիս...» խորագրով:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էր եւ ելույթ ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:

Գրաֆիկան՝ կերպարվեստի ամենահին տեսակներից մեկը, Մանոյան գեղանկարչի նախասիրած ժանրն է, ինչին նա դիմում է ժամանակ առ ժամանակ: Տարիներ առաջ, այդ ձեւաչափով ստեղծվեց նկարչի՝ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասանների դիմանկարների շարքը:

«Օրեցօր կերպարանափոխվող, նորացող քաղաքի ուրվագծերում անդառնալիորեն նվազում են մանկությանս ծանոթ բնապատկերները, փողոցները, շենքերը. «Հեռացող Թիֆլիսը...» իմ փորձն է՝ մոռացության ավերող փոշուց փրկելու հին քաղաքի ինքնատիպ, ջերմացնող գույները»,- խոստովանեց հեղինակը:

Ցուցահանդեսի պաշտոնական մասը բացվեց Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ, մանրանկարիչ Մերուժան Շահումյանի ողջույնի եւ Մանոյան գեղանկարչին ներկայացնող խոսքով:

Ելույթ ունեցան հայտնի գեղանկարիչ Ջովաննի Վեփխվաձեն, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի հայ մտավորականների միության նախագահ Ենոք Թադեւոսյանը, գեղանկարիչ Գարրի Միրզոյանը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի վաստակավոր արտիստ Ռոբերտ Հովհաննիսյանը, ֆոտոլրագրող Յուրի Մեչիտովը:

Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց, որ «Այս գծանկարները, հիրավի, արխիվային նյութեր են՝ ավանդված վաղվա թբիլիսցիներին եւ մատուցված զարմանալի ճշգրտությամբ ու գեղեցկորեն...»:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐՇԱՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, պետական մյուս գերատեսչությունների հետ միասին, Վրաստանում ԱՄՆ դեսպանության աջակցությամբ սկսում է ընտանեկան բռնության դեմ «Ոչ բռնությանը» սոցիալական արշավը:

Միջոցառումը հետապնդում է ընտանեկան բռնության վերաբերյալ հասարակական գիտակցության բարձրացման, հիմնախնդրի կարգավորման գործում հասարակության ներգրավման նպատակ: Արշավի շրջանակներում, ծրագրված է տարբեր միջոցառումների իրականացման միջոցով հասարակայնությանը ներկայացնել տեղեկատվություն այն մասին, որ ընտանեկան բռնության զոհերը պաշտպանվում են օրենքով, իսկ բռնացողները՝ օրինական պատիժ են կրելու:

ՆԳ նախարարությունում տեղի ունեցած շնորհանդեսին ներկա էին նախարար Ալեքսանդր Ճիկաիձեն, կրթության եւ գիտության առաջին փոխնախարար Քեթեւան Նատրիշվիլին, առողջապահության եւ սոցիալական օգնության նախարար Դավիթ Սերգեյենկոն, սպորտի եւ երիտասարդության գործերով նախարար Լեւան Ղիփիանին, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ, ԱՄՆ դեսպանի տեղակալ Նիկոլաս Բեռլիները, INL պետ Տրայս Նյուվելը, ՄԱԿ-ի կանանց կազմակերպության (UN WOMAN), միջազգային եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Շնորհանդեսին ներկայացվեց բռնության դեմ տեսահոլովակի ցուցադրումը:

Արշավի շրջանակներում, թաղամասային տեսուչները երկրի ողջ մասշտաբով բաժանել են ՆԳ նախարարության կողմից պատրաստած տեղեկատվական բուկլետները:

Նշենք, որ 2013 թվականին Վրաստանի ՆԳ նախարարության նախաձեռնությամբ, քրեական օրենսգրքում կատարվեցին փոփոխություններ, ըստ որի՝ ընտանեկան բռնությունը քրեականացվեց, բռնացողը դատապարտվում է մեկ տարվա ազատազրկման:

ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐ

ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԸ ԲՈԼՆԻՍ-ԽԱՉԵՆՈՒՄ

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայպետդրամայի թատրոնի կոլեկտիվը, նոյեմբերի 22-ին Բոլնիս-Խաչենում հանդիսատեսին ներկայացրեց Եվ.Շվարցի «Մոխրոտը» հեքիաթը: Հանդիսականները հիմնականում տեղի Ղ.Աղայանի անվան դպրոցի աշակերտներն էին, ուսուցիչները, ծնողները: Հանդիսատեսը մեծ ուշադրությամբ ու հաճույքով էր դիտում ներկայացումը եւ այն ուղեկցում բուռն ծափահարություններով եւ նրանց հատկապես շատ դուր եկավ Մոխրոտի դերակատար Գլորիա Գեւորգյանի խաղը:

Ուզում եմ նշել, որ մինչ այդ էլ Բոլնիս-Խաչենում ներկայացվել էր Հովհ.Թումանյանի հեքիաթների մոտիվներով ադամյանցիների ներկայացումը:

Շնորհակալություն ադամյանցիներ:

ՄԵԽԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Բոլնիս-Խաչենի դպրոցի տնօրեն՝

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ

«ԴԱՇՆԱՄՈՒՐԸ ԻՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՐԵԿԱՄՆ Է»

Մշակութային փոխկապերի «Կովկասյան տուն» կենտրոնում լեցուն դահլիճի առկայությամբ անցկացվեց երաժշտական երեկո, ավելի ստույգ ծնունդով թբիլիսցի, ներկայումս Գերմանիայի Զոլինգեն քաղաքում բնակվող Իրինա Դավիդովա-Սաֆարովայի երաժշտական բենեֆիսը: Երեկոն վարող Արտեմ Կիրակոզովը, լսարանին ներկայացնելով Իրինա Դավիդովա-Սաֆարովային, մեջբերեց նրա իսկ «Դաշնամուրը իմ լավագույն բարեկամն է» արտահայտությունը:

Իրինան մասնագիտությամբ ինժեներ-մեխանիկ է, տնտեսագետ: Սակայն մասնագիտությունն այդպես էլ չդարձավ նրա կոչումը: Շատ ավելի տարված էր երաժշտությամբ: Առավել եւս, որ ծնվել ու մեծացել է երաժշտասերների ընտանիքում, որտեղ անընդհատ հնչել է երաժշտությունը: Հայրը՝ պրոֆեսոր, Վրաստանի ինժեներական ակադեմիայի խորհրդական Յուրի Սաֆարովը հիանալի նվագում է մի շարք երաժշտական գործիքների վրա: Դեռեւս մանկուց Իրինան ստեղծագործում էր: Ճակատագրի բերումով Իրինան հայտնվեց Գերմանիայում: Հաշվի առնելով տեղի բծախնդրությունը, որտեղ առանց համապատասխան դիպլոմի տեղեկանքի կամ հանձնարարական նամակի, դժվար է գտնել համապատասխան աշխատանք, իսկ Իրինան տեխնիկական մասնագիտության աշխատանք չէր էլ փնտրում: Որոշեց իրեն փորձել երաժշտական ասպարեզում, թեպետ այդ ուղին շատ ավելի փշոտ էր, քանի որ նույնիսկ կոնսերվատորիայի կրթությամբ շատ մասնագետներ մնում էին առանց աշխատանքի:

Հելմուտ Գելտինգերը «Գեզանդշյուլե Զոլինգեն»-ում, այսպես կոչված, «երաժշտական արհեստանոցի» վարիչը հենց այն անձնավորությունն էր, որը Իրինային երաժշտություն դասավանդելու հնարավորություն ընձեռեց: Սկզբում նա դասավանդում էր հինգերորդ դասարանցիներին, որոնք ցանկացան շարունակել ուսուցումը, ապա՝ Իրինային վստահվեցին նաեւ մյուս դասարանները: Աստիճանաբար ավելացավ սաների թիվը: Նոր հայտնված ուսուցչուհին լայն ճանաչման արժանացավ:

«Կովկասյան տանը» անցկացված երեկոյին ներկաները մեծ ոգեւորությամբ ծանոթացան դաշնակահարուհու ստեղծագործությանը: Երեկոյի հաջողությունը պայմանավորված էր նաեւ այնպիսի ճանաչված մենակատարների ելույթներով, ինչպիսիք էին ռոմանսների հայտնի կատարող Նազի Սարջվելիձեն, երգեցողության բազում մրցույթների դափնեկիր Աննա Պողոսովան, ջութակահար Դավիթ Կաբաջյանը: Երեկոյի ավարտին ողջույնի խոսքով ելույթ ունեցան Վրաստանի ժողովրդական արտիստ Ռոբերտ Հովհաննիսյանը եւ կինոռեժիսոր, բանասեր Թենգիզ Մալանիան:

ԱՐՋԻԼ ԿՎԻՐԻԱ

«ՆԻՃԻԵՐԻ»

ԳԵՎՈՐԳ ՋԱՆ, ԻՐՈՔ, ԿԱՌՈՒԶՈ ԵՍ

Արդեն մի քանի տարի է, ինչ «Ռուսթավի 2» հեռուստաալիքով հեռարձակվող «Նիճիերի» (Տաղանդավոր) հաղորդումը լայն ընդունելություն է վայելում: Հաղորդման հեղինակների մտահղացմամբ, հաղորդաշարը նպաստելու էր այն մարդկանց հայտնաբերմանը, որքեր իրենց բնականորեն տրված շնորհները, ունակությունները այս կամ այն պատճառով չեն կարողացել բացահայտել:

Եվ ի պատիվ հաղորդման նախաձեռնողների, մտահղացումը իրեն ավելի քան արդարացրեց եւ որպես օրենք, հաղորդաշարի յուրաքանչյուր սյուժեն յուրատեսակ այցետոմս է դեռեւս չճանաչված, չգնահատված տաղանդների համար: Բավական է նշել, որ Աննա Խանչալյանը, որը «Քենդի» համույթի կազմում հաղթող դարձավ «Մանկական եվրատեսիլ-2013»-ում, առաջին անգամ հանրության առջեւ հանդես եկավ «Նիճիերի» հաղորդաշարում: Հաղորդաշարի շնորհիվ ճանաչելի դարձավ նաեւ նրա քույրը՝ Սոփո Թինիկաշվիլի-Խանչալյանը:

Բացառություն չկազմեց նաեւ սեպտեմբերի 18-ի հաղորդումը: Այս անգամ հաճելի անակնկալի հեղինակը թբիլիսցի տաքսու վարորդ Գեւորգ Պետրոսյանն էր: Նրա կատարմամբ Ջակոմո Պուչինիի «Տուրանդոտ» օպերայի եզրափակիչ Nessun Dorma («Ոչ ոք չպետք է քնի») արիան հիացրեց ոչ միայն ժյուրիի անդամներին, այլեւ՝ նախագծի նախընտրական փուլին հետեւելու համար դահլիճում հավաքված հանդիսատեսին:

Բնիկ թբիլիսցի, օրթաճալեցի Գեւորգ Պետրոսյանը, որը ծանոթների շրջանում հայտնի է Կառուզո մականվամբ (ի պատիվ իտալացի հանրահայտ տենոր Մարիո Կառուզոյի) իր մասին պատմելիս նշեց, որ եղել է Եհովայի վկաների աղանդի անդամ, հեռացել է նրանցից ու կնոջից, ընդունել ուղղափառություն: «Երգելը արգելվում էր, դռնեդուռ քարոզչությամբ էի զբաղված: Ինչո՞ւ հեռացա: Զգացի, որ թյուր արժեքներ են քարոզում: Նաեւ ցանկանում եմ բոլորին, այդ թվում նաեւ նախկին կնոջս ապացուցել, որ մարդն ուժեղ է բնության տրված շնորհներով եւ դա չպետք է թաքցնել»:

Նշենք, որ Գեւորգ Պետրոսյանի դուստր Պաուլինա Պետրոսյանը սովորում է Թբիլիսիի թիվ 103 դպրոցի հայկական բաժնի երկրորդ դասարանում:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ð²ðò — ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

àôêàôØÜ²êÆðàôÂÚàôÜ

2014-ը՝ ԱՄԵՆԱՏԱԲԸ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



Հեռուստատեսությամբ, եղանակի մասին խոսելիս, հաճախ են օգտագործում «ռեկորդային», «աննախընթաց» եւ նման բնորոշումները: Կցանկանայի իմանալ, արդյոք, կատարվե՞լ են ջերմաստիճանային կամ կլիմայական այլ բնորոշիչների հաշվարկումներ:

Ս.Միհրանյան

Նինոծմինդա

Կլիմայական փոփոխությունների դիտարկումներ, անշուշտ տարվում են: Մասնավորապես, ամերիկացի գիտնականները շարունակում են ջերմաստիճանային նոր ռեկորդներ արձանագրել Երկրի վրա եւ նախկինի պես սպասում են, որ այս տարին ամենատաքը կլինի օդերեւութաբանական դիտարկումների ողջ 135 ամյա պատմության ընթացքում: ԱՄՆ-ի օվկիանոսի եւ մթնոլորտի ուսումնասիրման ազգային վարչության նոր հետազոտության արդյունքներով, հոկտեմբերին մեր մոլորակում միջին ջերմաստիճանը հասել է 14,74 աստիճանի՝ ըստ Ցելսիուսի, ինչն ավելի բարձր է, քան նախկինում երբեւէ: Այս տարի արդեն ջերմաստիճանի ռեկորդային ցուցանիշներ են արձանագրվել մայիսին, հունիսին, օգոստոսին եւ սեպտեմբերին: Հունվարը, մարտը, ապրիլը եւ հուլիսը նույնպես շատ տաք են եղել: Ամերիկացի փորձագետների հաշվարկների համաձայն՝ այս տարվա առաջին տասն ամիսները ամենատաքն են եղել օդերեւութաբանական դիտարկումների ողջ պատմության ընթացքում: Այդ ժամանակաշրջանում միջին ջերմաստիճանը կազմել է 14,78 աստիճան՝ ըստ Ցելսիուսի: ԱՄՆ-ի օվկիանոսի եւ մթնոլորտի ուսումնասիրման ազգային վարչության աշխատակիցները համոզված են, որ 2014 թվականը կգերազանցի նախորդ բոլոր ռեկորդները, ուղղակի բաց է մնում, թե որքան կլինի միջին ջերմաստիճանը, հարցը:

Վարչության գնահատումների համաձայն՝ անցյալ տարի մոլորակի վրա միջին ջերմաստիճանը կազմել է 14,52 աստիճան՝ ըստ Ցելսիուսի: Արդյունքում, 2013 թվականը ջերմաստիճանային ցուցանիշով չորրորդ տեղն է զբաղեցրել՝ սկսած 1880 թվականից:

ԱՌՕՐԵԱԿԱՆ

«ԿԱՊՈՒՅՏ ՄԱՀԸ» ՄԵՐ ՏՆԵՐՈՒՄ

ԻՆՉՊԵՍ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԱՐՏԱՀՈՍՔՆ ՈՒ ՊԱՅԹՅՈՒՆՆԵՐԸ

Բնական գազը մեր բնակարաններում օգտագործում ենք, որպես հարմար եւ մատչելի վառելիք: Մոտեցնում ենք լուցկին գազայրիչին, բացում փականը եւ վերջ... առաջանում է ջերմային եւ նույնիսկ լուսային էներգիա, որը հեշտ է վերհասկել եւ օգտագործել:

Բայց արդյո՞ք այդ ամենը անվտանգ է եւ ապահով: Բնական գազը արդյունահանում են գազի հանքավայրերում, որտեղից այն խողովակներով հասնում է մեր գազօջախներ, գազի կաթսաներ եւ ջեռուցման սարքավորումներ: Բնական գազի հիմնական բաղադրիչը համարվում է մեթանը: Մեթանը, խառնելով օդի հետ, 5-15 տոկոսի դեպքերում պայթյունավտանգ է, այսինքն՝ կրակի հետ առնչվելիս. այդ խառնուրդը ակնթարթորեն հրդվեհվում է՝ արտադրելով մեծ քանակությամբ ջերմություն: Այդ ժամանակ ճնշումը 10 անգամ բարձրանում է: Պատկերացնենք՝ 100 մետր խորանարդ մակերես ունեցող տարածքում 5-15 մետր խորանարդ գազ է լցվել (այդ դեպքում գազի հոտը անտանելի կլինի) եւ ինչ-որ մեկը փորձում է լույս վառել, որպեսզի պարզի, թե որտեղից է գալիս այդ հոտը: Նա ոչինչ չի կարողանա եւ չի հասցնի պարզել, քանի որ պայթյուն տեղի կունենա:

Բնական գազը գույն, համ եւ հոտ չունի: Դրան արհեստական հոտ են հաղորդում, իսկ հոտի ինտենսիվությունը այնպես են բաշխում, որպեսզի մարդը զգա այն, մինչեւ գազի ծավալի 1 տոկոսի հասնելը:

Հիշեցնենք, որ այդ դեպքերում էլեկտրական սարքավորումներից օգտվել չի կարելի: Բնական գազի հրդեհման ջերմաստիճանը մոտ 750 աստիճան է՝ ըստ Ցելսիուսի, իսկ դա ցանկացած էլեկտրական կայծի եւ

նույնիսկ այրված ծխախոտի ջերմաստիճանն է:

Այդ դեպքում արագ բացեք դռներն ու պատուհանները, որպեսզի տարածքը օդափոխվի: Բնական գազը օդից երկու անգամ թեթեւ է, եւ այն շատ արագ դուրս կգա ձեր բնակարանից:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ կենցաղային գազի արտահոսքի եւ պայթյունի պատճառներից ամենահաճախ հանդիպողը մարդկային գործոնն է:

Գազի արտահոսքը կարող է մեծ վտանգ ներկայացնել մարդկանց համար: Գազը ոչ միայն թունավոր նյութ է, այլեւ կարող է այրվել եւ փակ տարածության մեջ պայթյունի պատճառ դառնալ: Պետք է շատ զգույշ վարվել գազի վառարանի եւ գազի բալոնի հետ, իմանալ՝ թե ինչ անել գազի արտահոսքի դեպքում, ում դիմել եւ ինչպես փրկել մարդկանց, ովքեր երկար ժամանակ գտնվել են այն վայրում, որտեղ գազի արտահոսք է եղել:

Գազի օգտագործման անվտանգության կանոնները պետք է շատ լավ իմանան նաեւ մեր երեխաները: Դա հատկապես ակտուալ է, երբ երեխաները տանը մենակ են մնում եւ ամեն ինչ ինքնուրույն են անում: Այդ դեպքում ծնողները հաճախ են զանգահարում երեխաներին, որպեսզի իմանան՝ ինչպե՞ս են նրանք, արդյոք նրանց մոտ ամեն ինչ կարգի՞ն է կամ ինչ-որ տեղի չի՞ ունեցել: Իսկ երեխաների հետ շատ բան կարող է տեղի ունենալ: Մեր երեխաները պետք է իմանան, որ գազի արտահոսքը չափազանց վտանգավոր է: Շնչելով բնական գազը՝ մարդը կարող է թունավորվել եւ նույնիսկ մահանալ: Գազը կարող է պայթել՝ դառնալով ավերածության եւ հրդեհի պատճառ: Բավական է փոքր կայծ, որպեսզի գազը հրդեհվի: Ահա թե ինչու գազի սարքավորումներից պետք է շատ զգույշ օգտվել եւ միշտ հետեւել դրանցից օգտվելու անվտանգության կանոններին:

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Նոյեմբերի 26-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային ճաշ է ունեցել Հայաստանում հավատարմագրված Եվրոպական միության անդամ երկրների դեսպանների եւ Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեայի հետ:

Այս ձեւաչափով ավանդական դարձած հանդիպմանը Հայաստանի նախագահը դեսպանների հետ խոսեց Հայաստանի արտաքին քաղաքականության հարցերի շուրջ՝ անդրադառնալով Հայաստան-ԵՄ օրակարգային հարցերին եւ համագործակցության զարգացման հեռանկարին, Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությանը, տարածաշրջանի խնդիրներին ու մարտահրավերներին:

Սերժ Սարգսյանը ներկայացրեց նաեւ ԼՂ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի վերջին զարգացումներն ու խաղաղ կարգավորման ուղղությամբ Հայաստանի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների կողմից ձեռնարկվող ջանքերը: Վերոնշյալ թեմաների շուրջ մտքերի փոխանակում է տեղի ունեցել:

ՀՐԱԺԵՇՏ ՁՈՀՎԱԾ ՕԴԱՉՈՒՆԵՐԻՆ

Նոյեմբերի 25-ին Երեւանի Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցում տեղի ունեցավ հակառակորդի կողմից խոցված հայկական ուղղաթիռի անձնակազմի անդամ զոհված օդաչուների՝ ուղղաթիռի հրամանատար Սերգեյ Սահակյանի, անձնակազմի անդամներ Սարգիս Ղազարյանի, Ազատ Սահակյանի հոգեհանգստի արարողությունը:

Զոհված հերոսների հոգեհանգստի արարողությանը ներկա էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, վարչապետ Հովիկ Աբրահամյանը, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, պատգամավորներ, կառավարության անդամներ, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Ներկա էր նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

Եռաբլուրում զինվորական կարգով տեղի ունեցավ հակառակորդի կողմից խոցված հայկական ուղղաթիռի անձնակազմի անդամների հուղարկավորության արարողությունը: «Եռաբլուր» պանթեոնում էին Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ԼՂՀ պաշտպանության նախարար Մովսես Հակոբյանը, ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանը, ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովը, զինվորականներ, պաշտոնատար այլ անձինք: Նշենք, որ դրան նախորդել էր ԼՂՀ պաշտպանության բանակի հատուկ նշանակության ջոկատների իրականացրած հատուկ գործողությանը, որի արդյունքում վերադարձվել էին ուղղաթիռի զոհված անձնակազմի անդամներից մեկի դիակը, մյուսների մասունքները, ինչպես նաեւ ուղղաթիռի որոշ սարքերը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՆ ԷՐ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիային:

Հանդիպմանը Հայաստանի նախագահը ներկայացնելով ոլորտում իրականացված փոփոխությունները, հույս է հայտնել, որ հայաստանյան այցի ընթացքում Կունիո Միկուրիան կկարողանա արձանագրել եւ գնահատել վերջին հինգ տարիների ընթացքում այս բնագավառում Համաշխարհային մաքսային կազմակերպության աջակցությամբ Հայաստանի կողմից իրականացված բարեփոխումների արդյունավետությունն ու ձեռքբերումները:

Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղարը Հայաստանի նախագահի հետ քննարկել է նաեւ Հայաստանի մաքսային ծառայության ոլորտի մարտահրավերներին ու բարեփոխումներին ուղղված հետագա ծրագրերը՝ այդ համատեքստում կարեւորելով մաքսավոր-գործարար համագործակցությունը, գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ շարունակական ջանքերը, որոնք, նրա համոզմամբ, ավելի մրցունակ կդարձնեն Հայաստանի տնտեսությունը:

ԸՆԴԳԾՎԵԾ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը՝ խորհրդարանական պատվիրակության հետ աշխատանքային այցով գտնվում էր Ֆրանսիայում:

Այցի շրջանակներում Գալուստ Սահակյանը հանդիպում է ունեցել Ֆրանսիայի ԱԺ նախագահ Կլոդ Բարտոլոնի հետ:

Հանդիպմանը կողմերը փաստել են Հայաստան-Ֆրանսիա հարաբերությունների առանձնահատկությունն ու միջպետական այդ հարաբերությունների զարգացման հարցում երկու ժողովուրդների պատմամշակութային բազմադարյա կապերը: Խոսելով երկկողմ հարաբերությունների մասին կարեւորվել է Ֆրանսիայում հայկական մեծ համայնքի առկայությունը՝ բաղկացած շուրջ կես միլիոն հայերից: Կլոդ Բարտոլոնը վերահաստատեց այն միտքը, որ Արցախյան հակամարտությունը պետք է լուծվի խաղաղ ճանապարհով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափով:

Հանդիպման ավարտին Գալուստ Սահակյանը Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահին հրավիրել է Հայաստան՝ մասնակցելու 2015 թվականի ապրիլին կայանալիք միջոցառումներին:

«ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ 2014»՝ ՀԱՆԳԱՆԱԿՎԵԾ 12,4 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի 17-րդ հեռուստամարաթոնի ընթացքում համայն հայության ջանքերով հավաքվել է 12 միլիոն 399 հազար 550 ԱՄՆ դոլար:

Հավաքված գումարը կուղղվի հայկական երկու հանրապետություններն իրար կապող շուրջ 116 կմ երկարությամբ Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի ասֆալտապատմանն ու հարդարմանը, ինչպես նաեւ բարերարների կողմից ընտրված հատուկ ծրագրերին Հայաստանում եւ Արցախում: «Հեռուստամարթոն 2013»-ին հավաքվել էր 21 միլիոն դոլար, որից 10 միլիոնը փոխանցվել էր ճանապարհի կառուցմանը, իսկ շուրջ 11 միլիոնը նախանշված էր այլ ծրագրերի համար:

ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, նոյեմբերի 25-ին տեղի է ունեցել «Լավագույն ուսուցիչ» ամենամյա հանրապետական մրցույթի 2014 թվականի հաղթողների մրցանակաբաշխության հանդիսությունը: Հանրապետական մրցույթի արդյունքներն ամփոփել է ՀՀ ԿԳ փոխնախարար Կարինե Հարությունյանը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաղթող ուսուցիչներին են հանձնվել մրցույթի մասնակցության վկայականներ, հոգեւոր գրականություն եւ դրամական պարգեւներ:

Մրցանակաբաշխությունն ամփոփվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամով եւ օրհնությամբ:

2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՓՈԽՎԵԾ

Հայաստանի 2015 թվականի պետական բյուջեի նախագծում փոփոխություններ կատարելու համար ՀՀ Ազգային ժողովի Հանրապետական, ՀՅԴ եւ «Ժառանգություն» խմբակցություններից ստացվել է 367 առաջարկություն, որոնք ենթադրում էին 163 մլրդ դրամի ծախս:

Կառավարության նիստում նշվեց, որ առաջարկությունները վերաբերել են տարբեր ոլորտների՝ տնտեսությանը, ԼՂՀ-ի տարաբնակեցման հայեցակարգին եւ այլն: Քննարկումների արդյունքում ընդունելի է համարվել 45 առաջարկություն, մնացածի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ: 2015 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծում՝ եկամուտների մասով նախատեսվում է ապահովել 1 տրիլիոն 191 մլրդ դրամ, ծախսերը՝ մեկ տրիլիոն 308 մլրդ դրամ: Դեֆիցիտը կկազմի 114 մլրդ դրամ: Հաջորդ տարվա պետական բյուջեի լրամշակված տարբերակը կներկայացվի Ազգային ժողովի հաստատմանը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎՈ ՄԵԴԱԼ՝ ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հայաստանի ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանի կարգադրությամբ, մշակույթի ոլորտում ունեցած մեծ ավանդի եւ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ «Սայաթ-Նովա» մշակութային միության նախագահ, ՀՀ ժողովրդական արտիստ, Թբիլիսիի թիվ 110 հայկական դպրոցի շրջանավարտ Թովմաս Պողոսյանին պարգեւատրել է ՀՀ Ազգային ժողովի Պատվո մեդալով: ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, շնորհավորելով Թովմաս Պողոսյանին, կարեւորել է հայ երգարվեստում նրա անցած ստեղծագործական ուղին, ջանքերը՝ պետության եւ հասարակության համար ամենավճռորոշ շրջանում հիմնադրելու «Սայաթ-Նովա» մշակութային միությունը եւ սերունդներին հայ ազգային-գուսանական մշակույթը հասցնելու գործում:

ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ. «ԵՏՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԻ ՎՏԱՆԳՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Հայաստանը, դառնալով Եվրասիական տնտեսական միության անդամ, պահպանելու է ազատ առեւտրի ռեժիմը Վրաստանի հետ:

Այս մասին Ազգային ժողովում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության վերաբերյալ խորհրդարանական լսումների ընթացքում հայտարարեց Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Շավարշ Քոչարյանը: «Բանակցությունների ամբողջ ընթացքում մենք ուշադրություն ենք դարձրել նրա վրա, որ Եվրասիական տնտեսական միության անդամակցությամբ մենք վտանգի տակ չդնենք հարեւան Վրաստանի հետ ազատ առեւտրի ռեժիմը: Սա մեզ համար շատ կարեւոր հարց էր, եւ մեզ հաջողվեց արդյունքի հասնել ու Եվրասիական տնտեսական միության պայմանագրին Հայաստանի միանալու մասին պայմանագրի երրորդ հավելվածում ֆիքսել ենք, որ պահպանելու ենք Վրաստանի հետ եղած առեւտրական բարձր մակարդակի հարաբերությունները»,- նշեց Շավարշ Քոչարյանը:

Նա ընդգծեց նաեւ, որ Հայաստանը պահպանելու է իր առեւտրական բարձր մակարդակի հարաբերությունները նաեւ հարեւան Իրանի հետ: Շավարշ Քոչարյանը շեշտեց, որ Վրաստանի եւ Իրանի հետ առեւտրական բարձր մակարդակի հարաբերությունների պահպանումը շատ կարեւոր նշանակություն ունի Հայաստանի համար, ինչին հայկական կողմին հաջողվեց հասնել ԵՏՄ-ին անդամակցության բանակցությունների ժամանակ:

Հայաստանի արտաքին գործերի փոխնախարարը նշեց, որ բանակցությունների ողջ ընթացքում կառուցողական դիրքորոշում է եղել թե՛ հայկական, թե՛ Եվրասիական հանձնաժողովի կողմից, ինչի արդյունքում էլ հնարավոր է եղել շատ արագ կազմակերպել ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցության գործընթացը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

29.11.2014. Սուրբ առաքյալների եւ մեր առաջին լուսավորիչներ Սուրբ Թադեոսի եւ Սուրբ Բարդուղիմեոսի հիշատակության օր

Սուրբ Թադեոսը եւ Սուրբ Բարդուղիմեոսը Քրիստոսի անխոնջ 12 առաքյալներից էին, ովքեր, գալով Հայաստան, քրիստոնեություն քարոզեցին հայ ժողովրդին՝ արժանանալով «Առաջին լուսավորիչներ» կոչմանը: Դեռեւս քրիստոնեության արշալույսին նրանք նահատակվեցին Հայաստանում: Առաքյալների գործունեության արդյունքում, 301 թվականին հայ ժողովուրդն աշխարհում առաջինը քրիստոնեությունը հռչակեց իբրեւ պետական կրոն:

Հայ Առաքելական եկեղեցին սուրբ առաքյալների եւ մեր առաջին լուսավորիչների՝ Սուրբ Թադեոսի եւ Սուրբ Բարդուղիմեոսի հիշատակը տոնում է Հիսնակի երկրորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը:

02.12.2014. Հիշատակ Սուրբ Կոռնելիոս հարյուրապետի, Քրիստոսի ազգական Սուրբ Շմավոնի, Զմյուռնիայի Սուրբ Պողիկարպոս հայրապետի եւ արեւելքի սուրբ վկաների:

ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ

ՇԱԽՄԱՏ. ՄԱԳՆՈՒՍ ԿԱՐԼՍԵՆԸ ՊԱՀՊԱՆԵՑ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆԻ ԿՈՉՈՒՄԸ



Շախմատի աշխարհի չեմպիոն նորվեգացի Մագնուս Կարլսենը պահպանեց աշխարհի չեմպիոնի կոչումը:

Հնդիկ շախմատիստ Վիշվանաթան Անանդի հետ մրցախաղի 11-րդ տուրում գրոսմայստերները կատարեցին 45 քայլ, որից հետո հնդիկ շախմատիստը հանձնվեց: Այս հաղթանակից հետո Կարլսենը հավաքեց 6,5 միավոր, եւ ինչպես մեկ տարի առաջ էր՝ դարձավ աշխարհի չեմպիոն:

Կարլսենը ծնվել է 1990թ. նոյեմբերի 30-ին Նորվեգիայում: Աշխարհի ամենաերիտասարդ գրոսմայստերներից մեկն է (կոչմանն արժանացել է 13 տարեկանում): Շախմատային աշխարհի հետ նրան ծանոթացրել է հայրը, երբ նա ընդամենը հինգ տարեկան էր: Իսկ ավելի լուրջ Կարլսենը սկսել է զբաղվել շախմատով 8 տարեկանում: Մասնակցում է տարբեր մրցաշարերի, օրական 2-3 ժամ զբաղվում է արագ շախմատով ինտերնետում:

ՖՈՒՏԲՈԼ. ՆԱՀԱՆՋ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿՈՒՄ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների հերթական վարկանիշային սանդղակը:

Վրաստանի թիմը, վերջին ժամանակներում ցուցաբերած անշուք խաղի արդյունքում, նահանջել է 9 հորիզոնականով եւ ներկայումս հանգրվանել է 126 հորիզոնականում: Զբաղեցրած դիրքերից երկու հորիզոնականով նահանջել է նաեւ Հայաստանի հավաքականը: Այն նոր վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 77-րդ տեղը:

Լավագույն տասնյակում փոփոխություններ չեն կատարվել: Դրանում ընդգրկվել են Գերմանիայի, Արգենտինայի, Կոլումբիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Բրազիլիայի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի եւ Ուրուգվայի հավաքականները:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ԲՈՐԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ



Այսօր, նոյեմբերի 29-ին, լրացավ 40 օր, ինչ երկրային կյանքին հրաժեշտ տվեց Ծալկայի շրջանի երեւելի գործիչներից մեկը՝ Բորիս Վաղարշակի Սարգսյանը: Այսպես թե այնպես մարդը մահկանացու է, եւ ժամանակը սովորաբար ի զորու է դարմանել ցանկացած վերք: Բայցեւայնպես, այդ նույն ժամանակը մարդկային հիշողության ծալքերից չի ջնջում բազմաթիվ դեմքեր ու պատկերներ, որոնք տպավորվում են հիշողության մեջ իրենց կյանքի էջերով, իրենց արած գործերով, ու որքան ավելի հարուստ են այդ էջերը, որքան ավելի գեղեցիկ է նրանց մարդկային տեսակը, այնքան ավելի անջնջելի է դառնում այդ հիշողությունը ու, նաեւ ցավագին...

Բորիս Սարգսյանը այս մարդկանցից էր: Նրա 80-ամյակը պիտի բոլորեր մյուս տարի: Նրա ծննդավայր Ծալկայի շրջանի Ղուշչին չհասցրեց արժանվույնս նշելու իր համագյուղացու արժանի հոբելյանը՝ նրա կենդանության օրոք: Փոխարենը՝ այսօր կինոժապավենի պես գյուղի հայացքի դեմ վեր է հառնում արդեն հավերժի ճանապարհը բռնած շրջանում սիրված համագյուղացու լուսավոր կերպարը:

Բազմանդամ ընտանիքում էր ծնվել Բորիս Սարգսյանը՝ Վաղարշակի ու Հռիփսիմեի վեց զավակներից մեկն էր նա, որ դեռ փոքրուց աչքի էր ընկնում իր աշխատասիրությամբ, բարձր առաջադիմությամբ: Այդ բարձր առաջադիմությունն ու այնուհետեւ մարդկային բարձր հատկանիշները նա դրսեւորեց ե'ւ բուհում՝ Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտում, ե'ւ ծննդավայրում պաշտոնավարելիս. նա երկար տարիներ Ղուշչիի կոլտնտեսության նախագահն էր, Ղուշչիի (հինգ գյուղերով հանդերձ) կաթնա-կարտոֆիլագործական սովխոզի տնօրենը, գյուղի կոլտնտեսության կուսբյուրոյի քարտուղարը, Ծալկայի շրջկոմխորհրդի պատգամավորներից եւ շրջկոմի բյուրոյի անդամներից մեկը, ե'ւ իր ընտանիքի՝ տիկնոջ հանգուցյալ մանկավարժ Զոյայի ու երեք զավակների՝ Վաղարշակի, Հերմինեյի ու Ֆելիքսի հետ հարաբերություններում: Նա արժանապատվորեն կատարեց իր հայրական պարտականությունները նաեւ: Զավակները ստացան բարձրագույն կրթություն եւ, դաստիարակված լինելով օրինակելի ընտանիքում, մինչեւ վերջ գլուխ խոնարհեցին իրենց ծնողների առաջ ու իրագործեցին նրանց պատգամները՝ բոլոր դեպքերում մնալ մարդ, ընդառաջել կարիքավորին, օգնել նեղյալին:

Բորիս Սարգսյանի, թերեւս ամենամեծ վաստակը այսպիսի զավակներ կրթելը եղավ: Նրա որդին՝ Վաղարշակը հեռավոր Պերմից այսօր շատ է օգնում իր հայրենակիցներին: Հոր գեներն են՝ հայրն էլ, ինչպես նշեցինք, օժտված էր նման հատկանիշներով, նրան շատ էին սիրում նաեւ իր բարեգթության, ազնվության, անանձնական ուրախության համար: Հնարավոր չէ չասել, որ Բորիս Վաղարշակին մեծ ներդրում է ունեցել գյուղի բարգավաճման գործում. նրա գործունեության կարեւոր էջերից են գյուղական ակումբի շինարարությունը, Հայրենական պատերազմի զոհերին ու մասնակիցներին նվիրված հուշարձանի կառուցումը, ջրամատակարարման ու ոռոգման համակարգի կառուցումը, շտապ օգնության կայանի կառուցումը... Նրա վաստակը ըստ արժանվույնն է գնահատվել. նա պարգեւատրվել է բազմաթիվ բարձրագույն շքանշաններով, մեդալներով ու պատվոգրերով:

Գործն է անմահ լավ իմացեք՝ ասում է Հովհաննես Թումանյանը: Այս միտքը կարելի է անվարան վերագրել նաեւ Բորիս Սարգսյանին: Նա լավ անուն ու լավ հետագիծ թողեց իր հետեւից եւ այդ անունով դեռ երկար կապրեն, կմխիթարվեն ու կհպարտանան նրա զավակները, նրան ճանաչողները, նրա' համագյուղացիներն ու ողջ շրջանը:

Հողը թող թեթեւ լինի նրա շիրիմին: Ու երկնային հրեշտակները պահպանեն նրա հավերժական քունը:

ՄԻ ԽՈՒՄԲ ԸՆԿԵՐՆԵՐ

Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղի մանկավարժական կոլեկտիվը ցավակցում է դպրոցի ուսուցչուհի էթերի Քոբեսաշվիլուն, սիրելի ամուսնու՝

Շեքսպիր ԱՂԱՅԱՆԻ

մահվան կապակցությամբ:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Այլ երկրի բռնակցում: 8.Գյուղաքաղաք Վրաստանում: 9.Գետ Գերմանիայում: 10.Նախճիր: 13.Բույսերից պատրաստված մազերի ներկ: 18.Կանացի զարդ՝ ճարմանդ: 19.Գ.Սունդուկյանի երկերից: 22.Ասորեստանի թագավորության առասպելական հիմնադիրը եւ Նինվե քաղաքի անվանադիրը հին հունական դիցաբանության մեջ: 23.Մրգատու: 28.Պատշաճ, սազական: 29.«... զինվորիկը», հեքիաթ: 32.Որսի կենդանի: 33.Պողպատի մշակման պրոցես: 34.Գետ Բելոռուսում եւ Լիտվայում: 37.Կուսակցություն Հայաստանում: 39.Մարդուն տրվում է ծնվելիս: 41.Ինչպե՞ս (ժող.): 44.Նիհար: 46.Արդյոք: 47.Թաց, խոնավ: 49.Սագ (բրբ.): 50.Թվացող, ոչ իրական: 52.Ատամնաբույժի գործիք: 54.Մսագործ: 55.Հնոց: 56.Հայտնի օպերային թատրոն Միլանում, «...-Սկալա»: 57.Լույսի աղբյուր, որը ճառագայթում է կոհերենտ ֆոտոնների փունջ: 58.Լուռ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Բելգիացի սյուրռեալիստ նկարիչ ... Մագրիտ: 2.Երկտասնյակ: 3.Սպասավոր: 4.Արեւադարձային եւ մերձարեւադարձային շրջաններում ապրող թունավոր խոշոր օձ: 5.Արքա: 6.Վրացական հաց: 11.Ներքնադուռ: 12.Քաղաք Ֆրանսիայում, պատմական Նորմանդիայի մայրաքաղաքը: 14.Կուսակրոն քահանա: 15.«Կոմս ... Քրիստո»: 16.«Դիետա» եկեղեցու օրենքով: 17.Խոսքի մաս: 20.Նշանակետ: 21.Իտալացի երգահան Ջակոմո Պուչինիի օպերա չորս գործողությամբ: 24.Ամերիկացի գրող Մարկ ...: 25.Հենց հիմա: 26.Մոնղոլիայի մայրաքաղաքը՝ ...-Բատոր: 27.Ամերիկահայ ռոք երաժիշտ եւ երգահան ... Թանկյանը: 30.Տեսքով նույնը: 31.Տեսողական զգացողություն, որը մարդուն տալիս է լրացուցիչ տեղեկություն՝ միանման եւ միեւնույն չափսերի տարբեր առարկաներ իրարից տարբերակելու համար: 35.Ի՞նչ իմանամ (ժող.): 36.Ծես: 37.Երկրակեղեւի վերին փխրուն ու բերքատու շերտը, որտեղ աճում են բույսերը: 38.Ճաշ, ուտելիք: 40.Էստոնիայի ԱԳ նախարարը ... Պաետ: 42.Մինչեւ: 43.Ազգությամբ հայ ֆրանսիական էստրադային երգչուհի Քրիստիան ...: 44.Ռուսական էստրադային երգչուհի ... Ուսպենսկայա: 45.Աղիքից պատրաստված: 48.Աքիս: 51.Կեռասի նման միրգ: 52.Արագացման չափման միավոր CGS համակարգում, հավասար է 1սմ/վ2: 53.Եկեղեցական քաղաք Անգլիայում:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ածանց: 6.Մավր: 9.Գրպան: 10.Ռելիեֆ: 12.Դունչ: 13.Մեկնարկ: 17.Անգութ: 20.Նկար: 22.Մարգարե: 24.Անափ: 26.Աղմուկ: 29.Արաքս: 31.Սոնատ: 34.Տգեղ: 36.Նեկտար: 37.Բնասեր: 38.Բիբ: 39.Լիդա: 40.Անանաս: 42.Խմած: 44.Մար: 46.Մի: 47.Ազապ: 49.Ռոպե: 51.Վճիռ: 53.Նանա: 57.Տառ: 59.Կաղնի: 61.Աներեր: 62.Տող: 63.Ռումբա: 64.Եվա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Ծալք: 3.Նսեմ: 4.Ուրան: 5.Վագր: 7.Առույգ: 8.Թռչուն: 11.Ֆերմա: 14.Արգոն: 15.Կարատե: 16.Իրաք: 18.Նեղ: 19.Ուշու: 21.Կար: 23.Ափսե: 25.Նստել: 27.Մատանի: 28.Կարաս: 29.Ամբոխ: 30.Ագարա: 32.Ողբամ: 33.Անբարո: 35.Գրիշա: 41.Ամեն: 43.Ծառ: 45.Արկտիկա: 48.Պտուղ: 50.Ան: 51.Վիշապ: 52.Իգրեկ: 54.Աորտա: 55.Ատաղձ: 56.Զկեռ: 58.Ռելե: 60.Արու:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445